Կազմված է _09_._09 _.2018 թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ _1_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

« ԳԱԼԻՔ »
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

«_09 » սեպտեմբերի 2018 թ.

ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

_____ Վահրամ Բայադյան_
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԳՐԱՆՑՎԱԾԷ

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.172.1071105

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

00201948

«26» ապրիլի 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ

« ԳԱԼԻՔ »
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Կուսակցության ծրագրի հիմնական դրույթները

Կուսակցությունն անվանելու որոնումներում մենք կանգ առանք ''Գալիք'' անվան վրա կուսակցությանն անդամագրվել ցանկացողին հաղորդելով այն ուղերձը, որ իր օգնությամբ և օժանդակությամբ հնարավոր է կառուցել մեր վաղվա, բառացիորեն վաղվա օրը և ոչ թե հեռավոր ապագան:

Այդ հնարավորությունը մենք կարող ենք ունենալ, եթե միայն հրաժարվենք տնտեսավարման նեոլիբերալ մոդելից, քանի որ այս մոդելի տրամաբանությունը տնտեսությունը տանում է փակուղի, և ոչ միայն նոր զարգացող, այլև զարգացած համարվող երկրներում: Այն նաև շարունակաբար ուեզրկում է ազգաբնակչությանը և ավելի ու ավելի բևեռացնում հասարակությունը, այն քայքայում է պետականության հիմքերը թե տնտեսապես, թե գաղափարապես ու բարոյապես: Այսինքն ներկա տնտեսական մոդելի գործողության պայմաններում որևէ էական տեղաշարժ իրականացնել հասարակության կյանքի ոչ մի կարևոր բնագավառում հնարավոր չէ:

Ամենակարևոր հետևությունն այստեղից այն է, որ մենք պետք է ձևավորենք մի նոր տնտեսական միջավայր /մոդել/, որը թույլ կտա շրջանցել նեոլիբերալ տնտեսության թակարդները և գտնել զարգացման ուղին:

Ամենամեծ խնդիրը, որին մենք բախվում ենք այդ ճանապարհին, դա երկրի կյանքի կառուցման գործում պետության դերի նվաստացուցիչ վիճակն է: Պետությունը գործնականում զրկված է իր երկրում տնտեսական քաղաքականությունն ուղղորդելու, տնտեսական, ֆինանսական գործընթացների վրա ռեալ ազդեցության լծակներից:

Մենք պետք է կարողանանք մոտ ապագայում լուծել երկրի պաշտպանունակության, պարենային անվտանգության, ժողովրդագրական անվտանգության, առողջապահական անվտանգության, կրթության, գիտության, մշակութային և էթնիկական անվտանգության, և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ: Պարզ է, որ այդպիսի խնդիրներ լուծելու համար մենք մասնավոր բիզնեսի, մասնավոր կապիտալի, մասնավորի վրա հույս դնել չենք կարող բազմաթիվ հիմնավոր պատճառներով.

Պետությունն ինքը պետք է դառնա դրանց լուծման նախաձեռնողը: Դրա համար նա պետք է վերադարձնի այն լծակները, որոնք նրան թույլ կտան վերահսկել և անխափան այն է, որ կառավարել իր կողմից գեներացվող տնտեսական գործընթացները: Իշխանությունը տնտեսության բոլոր ճյուղերում պետք է ստեղծի ստվար պետական սեկտոր: Այս նպատան առավել քան հասկանալի է և հիմնավորված :Ունենալով ստվար պետական տնտեսություն,մենք կարող ենք պետական գանձարանի համար ապահովել առավել մեծ եկամուտներ, քան դա կարող է անել համարժեք մասնավոր տնտեսությունը, ինչն այս էտապում չափազանց

կարևոր է տնտեսության զարգացման անհրաժեշտ դինամիկա ապահովելու հնարավորության տեսանկյունից:

Պետությունն իր տնտեսության մեջ պետք է ներդնի այնպիսի լծակներ, որոնք թույլ կտան հասարակական արդյունքի համեմատաբար արդար վերաբաշխում իրականացնել, նման անհրաժեշտություն ստեղծելով նաև մասնավորի համար: Սրանք չեն սահմանափակում մասնավոր տնտեսության, մասնավոր կապիտալի հնարավորությունները, այդ հնարավորությունները դարձնում են իրենց կարողություններին համաչափ:

Մենք պետք է ձևավորենք վստահելի, կանխատեսելի, գործընկերային օրենսդրական միջավայր տնտեսական դաշտի բոլոր խաղացողների համար, պետք է ստեղծենք կայուն, ճկուն և հասանելի ֆինանսական համակարգ:

Մեր երկրի ներկա վիճակը մեծ արագությամբ փոխելու համար պետք են հսկայական տնտեսական նախագծերի իրականացում կյանքի տարբեր ոլորտներում և միաժամանակ: Դրանց համար անհրաժեշտ են հսկայական ֆինանսական միջոցներ: Դրանք ամենայն բծախնդրությամբ պետք է ծախսվեն տնտեսության ամբողջական ոլորտներ ոտքի կանգնեցնելու համար, երկրի կառուցվածքը, դեմքն ու նշանակությունը փոխելու համար:

Այսպիսի մասշտաբային ծրագրեր կարող է և լիազորված է անել միայն պետությունը և դրանք պետք է լինեն ճշգրտորեն պլանավորված և կառավարելի սկզբից մինչև վերջ:

Մասնավորը կարող է իր օժանդակությունն անել համապատասխան ոլորտներում լրացուցիչ ներդրումներ անելով, հատկապես այն ոլորտներում, որոնք պետական ծրագրերի հաշվին դարձել են գրավիչ և եկամտաբեր: Պետությունը տարբեր եղանակներով կարող է միայն խրախուսել մասնավորին ներդրումներ անել ցանկացած ոլորտում:

Կուսակցության ծրագրի հիմնական ուղենիշերը

Մենք պետք է ուրվագծենք այն խնդիրների շրջանակը, որոնք, մեր տեսանկյունից, **համակարգային լուծման կարիք ունեն:**

Առաջինը դա տնտեսությունն է, որտեղ մենք պետք է զարգացնենք աշխատատար, , գիտատար, տեխնոլոգիական, նորարական, էներգախնայող արտադրություններ և ծառայություններ տնտեսության բոլոր ոլորտներում:

Մենք պետք է զարգացնենք թեթև և տեքստիլ արդյունաբերությունը որպես աշխատատար ճյուղ: Այն կարող է ապահովել ներքին պահանջարկը և արտահանման մեծ ծավալներ ստեղծել:

Մենք պետք է վերականգնենք և նոր տեխնոլոգիաների հիման վրա զարգացնենք մետաղական և ոչ մետաղական հանքարդյունաբերությունը:

Մենք պետք է ստեղծենք գերժամանակակից ճշգրիտ հաստոցաշինություն և սարքաշինություն:

Մենք պետք է վերականգնենք քիմիական արդյունաբերության անհրաժեշտ ուղղությունները:

Մենք պետք է ստեղծենք ժամանակակից էլեկտրոնիկայի, էլեկտրական, բժշկական սարքերի ու սարքավորումների, ռազմական տեխնիկայի արտադրություններ:

Մենք պետք է զարգացնենք տեղեկատվական տեխնոլոգիաներն ու նորարարությունը:

Մենք պետք է կարողանանք ապահովել երկրի տեղեկատվական անվտանգությունը, այդ նպատակով պետք է ստեղծենք մեր ցանցը համաշխարհային ցանցի մեջ և ապահովենք տեղեկատվական դաշտի անընդհատությունն ու անձեռնմխելիությունը:

Մենք պետք է կարողանանք առաջիկա ութ- ինը տարիների ընթացքում լուծել երկրի պարենային անվտանգության խնդիրը՝ ազգաբնակչությանն ապահովելով հացահատիկով, մսամթերքով, կաթնամթերքով:

Մենք պետք է լուծենք մեր ջրային անվտանգության խնդիրը: Այդ ոլորտում առաջին և ամենակարևոր խնդիրը Սևանի խնդիրն է, որտեղ մեր նպատակը Սևանի մակարդակի բարձրացումն է, ափամերձ տարածքների մաքրումը, ձկնաբուծության զարգացումը: Հաջորդը երկրից հեռացող գետերից առավելագույնը վերցնելու համար ջրամբարների կառուցումը, ջրային ավազանի բնապահպանական վիճակի վերականգնումն է, Արարատյան դաշտավայրում արտեզյան ավազանի շահագործման խելամիտ չափերի սահմանումը,որը կապահովի ջրերի նախկին մակարդակի վերադարձը:

Էներգետիկ անվտանգության ապահովման նպատակով մենք պետք է առաջիկա տաս տարիների ընթացքում կառուցենք մեկ կամ մի քանի ատոմակայաններ ընդհանուր 1200-1500 մեգավատտ հզորությամբ, կառուցենք 3-4 գազատուրբինային ջերմաէլէկտրակայաններ, զարգացնենք այլընտրանքային էներգետիկան՝ տարեկան արտադրենք և ներդնենք միջինը 200-300 մեգավատտ հզորությամբ ֆոտովոլտային պանելներ, փորձարկենք նոր տեխնոլոգիաներ:

Մենք մեծ անելիքներ ունենք բնապահպանության և ազգաբնակչության առողջապահական անվտանգության առումով: Դրա համար պետք է փակենք ագրեսիվ տեխնոլոգիաների մուտքը երկիր, բնապահպանական նորմերը համընդհանուր դարձնենք հին և նոր արտադրությունների համար, վերահսկենք ներմուծվող դեղորայքի և բժշկական սարքերի ու սարքավորումների որակական համապատասխանությունը ներկայացվող պահանջներին, առողջապահական ոլորտում սկզբնավորենք և զարգացնենք բազմակողմանի հետազոտական աշխատանքներ:

Երկրի ռազմական անվտանգության ապահովման նպատակով մենք պետք է կարողանանք բանակն ապահովել ամեն ինչով՝ նորագույն զենք-զինամթերքով, զինտեխնիկայով, մթերքով, հանդերձանքով, հակառակորդի հետ ողջ սահմանի երկայնքով ունենալ տեխնիկական և ինժեներական առումներով լավագույնս ամրացված դիրքեր,համալրված լավագույնս պատրաստված և զինված պայմանագրային զինծառայողներով: Բանակում մեծ տեսակարար կշիռ պետք է ունենան ոչ մեծ ստորաբաժանումներով կազմավորված զորքերը՝ ունիվերսալ, օպերատիվ, գերարագ, որոնց միջոցով շատ կարճ ժամանակահատվածում հնարավոր կլինի իրականացնել ռազմավարական նշանակության խնդիրներ:

Երկրի ֆինանսական անվտանգությունն ապահովելու համար մենք պերք է ունենանք պետական բանկային համակարգ, պետք է կարողանանք տնտեսության մեջ ապահովել արտահանման գերազանցություն ներկրման նկատմամբ, կարողանանք սպասարկել և նվազեցնել արտաքին պարտքը:

Երկրի տրանսպորտային անվտանգությունն ապահովելու համար մենք առաջին հերթին պետք է վերակառուցենք և լավագույն վիճակում պահպանենք ներքին ճանապարհային ցանցը, ավարտենք / երեք տարվա ընթացքում / հյուսիս- հարավը, երկաթուղային հաղորդակցությունը լիարժեքորեն վերականգնենք Վրաստանով, նպատակահարմարության դեպքում երկաթուղային հաղորդակցություն ստեղծենք Իրանի հետ, երկրորդ ցամաքային ճանապարհն ստեղծենք Վրաստանով:

Այժմ մենք ունենք ժողովրդագրական անվտանգության լուրջ խնդիրներ. հսկայական արտագաղթ, ծերացող հասարակություն, ծնելիության պակաս: Վերևում թվարկված խնդիրներից յուրաքանչյուրն իր դերն ունի ժողովրդագրական սպառնալիքի ահազնացման գործում:

Այդ առումով պետությունը պետք է ստեղծի և զարգացնի տնտեսության իրական, աշխատատար, արդյունավետ ճյուղերը/ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն /, ինչը կբացի արտագաղթածների մեծ մասի վերադարձի ճանապարհը: Պետությունը պետք է ձեռնարկի լայնամասշտաբ բնակարանային շինարարություն, եթե կարելի է այսպես անվանել, համալիր հիփոթեքի պայմաններով, ինչը թույլ կտա վերջնականապես բառապաշարից հանել աղետի գոտի արտահայտությունը և միաժամանակ ողջ երկրի մասշտաբով ոչ մեծ հեռանկարում լուծել այդ խնդիրը:

Պետությունը պետք է ունենա գաղափարախոսություն : Այն պետք է մատուցվի քաղաքացում մանկական տարիքից, նախադպրոցական և դպրոցական տարիքից՝ դասագրքերի, ուսումնական ծրագրերի, մանկավարժական աշխատանքի միջոցով: Դրանք երեխայի մոտ պետք է վերաբերմունք ձևավորեն հայրենիքի, հասարակության, բնության, կենդանական աշխարհի նկատմամբ: Երիտասարդ տարիքում քաղաքացին պետք է զգա պետության հոգատարությունն ու օժանդակությունը իր նկատմամբ՝ իր կրթության, աշխատանքային, բնակարանային խնդիրների լուծման գործում:

Քաղաքացու ձևավորման գործում կարևոր նշանակություն ունեն հեռուստատեսությունը, ռադիոն, ԶԼՄՆ-երը: Դրանք՝ լինելով ազատ, միաժամանակ պետք է պատիվ համարեն այնպիսի ծրագրերի պատրաստումն ու հեռարձակումը, որոնք օգտակար ազդեցություն կունենան հասարակական բարոյականության, ընտանեկան արժեքների գնահատման, ազգային պատկանելության իրական արժևորման, սեփական պետության դերի և այդ պետության մեջ քաղաքացու դերի կարևորման գիտակցման վրա:

Գիտության և կրթության զարգացման նպատակով պետք է առանձնացնել միջնակարգ և միջնակարգ-մասնագիտական կրթությունը որպես հանրակրթական համալիր իր նպատակներով՝ գիտելիքներ և կրթություն տալ, աշխարհայացք ձևավորել: Բարձրագույն կրթությունը պետք է միավորել գիտության և նորարարության հետ որպես ԲՈՒՀ-ական հետազոտական- կիրառական կենտրոնների ձևավորման ճանապարհ, ինչպես նաև ձևավորել առանձին նորարարական կենտրոններ նորագույն տեխնոլոգիաների ուսումնասիրության, մշակման, գործադրման հնարավորություններով:

Մշակույթին և արվեստին վերաբերվող պետական քաղաքականությունը պետք է լինի՝ չվնասել, բայց և թույլ չտալ վնասել: Չվնասել իրական մշակույթի ինքնուրույն զարգացմանը, բայց և թույլ չտալ այնպիսի կեղծ մշակույթի ծաղկմանը, որը դեմ է հասարակական ու ընտանեկան արժեքների հիմնարար սկզբունքներին, ինչը խաթարում է ազգային մշակութային մտածողությունը: Առաջնային խնդիր է պահպանել մեր մշակութային ինքնությունը ի հեճուկս ժամանակակից գլոբալիստական մշակութային համահարթեցման քաղաքականության: Կարևոր է ունենալ մշակութաբանական և արվեստագիտական կենտրոններ, որոնց հետազոտական, վերլուծական աշխատանքները կբացեն զարգացման հեռանկարները, կիմաստավորեն արված աշխատանքը, կամ ցույց կտան հնարավոր շեղումների բովանդակային դատարկությունը:

Մենք ունենք էթնիկական անվտանգության խնդիր: Այդ նպատակով պետությունը պետք է ֆինանսավորի հայագիտական աշխատանքների իրականացումը ծրագրված ուղղություններով: Դրանք պետք է ներառեն մեր լեզվի ուսումնասիրությունը, պատմության ուսումնասիրությունը, դրանց արդյունքների հիման վրա պետք է վերահիմաստավորվեն և վերամեկնաբանվեն մեր պատմության անցքերը մարդկության պատմության առաջին օրերից: Մենք պետք է ճանաչենք և ճանաչելի դարձնենք հայ էթնոսի տեղը և դերը համաշխարհային պատմության մեջ:

Միաժամանակ պետությունը պետք է սահմանի և պահպանի այնպիսի միգրացիոն քաղաքականություն, որը մեզ զերծ կպահի սեփական հողի վրա ասիմիլացման վտանգից:

Մենք ունենք արտաքին անվտանգության խնդիրներ: Դրանք առընչվում են մեր ագրեսիվ հարևաններին / Ադրբեջան, Թուրքիա /՝ տարածաշրջանային առումով, և աշխարհաքաղաքական առումով՝ մեր ռազմավարորեն բախտակից երկրների

/Ռուսաստան, Չինաստան, Իրան / հետ մեր հարաբերություններին: Մեր ագրեսիվ հարևանների պանթյուրքական նպատակները և այդ համատեքստում նրանց ռազմաքաղաքական ծրագրերը օժանդակություն են գտնում աշխարհին իշխել հավակնող վերպետական միավորումների կողմից: Մեր պետության գոյությունը նաև լրջորեն խոչնդոտում է աշխարհաքաղաքական դերակատարում ունեցող և ռազմավարորեն մեզ դաշնակից այդ երկրների վրա նրանց կողմից ճնշումների ուժեղացման հնարավորություններին:

Մեր խնդիրն է այդ երկրների / Ռուսաստան, Չինաստան,Իրան / իշխանությունների հետ լրջորեն քննարկել սպառնալիքների իրական խորությունը և դրանց դիմագրավելու գործում մեր դերակատարության կարևորությունը:Այդ երկրների ղեկավարությունների հետ մենք պետք է գնանք մեր պատկերացումների խորքային համաձայնեցման, նպատակների ձևակերպման և անելիքների վերաբերյալ երկարաժամկետ ծրագրերի մշակման: Այս ենթատեքստում բոլորովին այլ բովանդակություն և կարողություն կստանան Արցախյան հիմնախնդրի լուծման մեր հնարավորությունները:

Արցախի խնդիրը մեր պետականության համար լակմուսի թղթի դեր ունի: Այն իր զարգացումների հետագծով ճշգրտորեն ներկայացնում է մեր երկրի հնարավորությունների ընթացքը: Այստեղ ձախողումը կդառնա մեր պետականության գահավիժման սկիզբը: Լայնամասշտաբ պատերազմական գործողությունների տարբերակն իսկ, անգամ մեզ համար դրական ելքով, պետք է համարել ձախողում: Մենք այդքան մարդկային ռեսուրսներ չունենք և ռազմավարական օբյեկտներն էլ հարվածի տակ դնելու իրավունք չունենք:

Ինչպես կարելի է հասկանալ մեր անելիքը խնդրի կարգավորման գործընթացում:

Տարածքներ խաղաղության դիմաց, կամ , ընդհանրապես որևէ տարածք տալու մասին, խոսք լինել չի կարող: Ընդհանրապես, մեր կարծիքով, պետք է բառապաշարից աստիճանաբար հանել փոխզիջումային տարբերակ հասկացությունը: Որքան էլ '' միջազգային հանրության '' ականջին արդարացի թվա այս ձևակերպումը, այն մեզ համար ընդունելի համարվել չի կարող: Այսքան տարիների ընթացքում մենք մեզ զրկել ենք հայցվորի կարգավիճակից: Գիտենք, որ լիովին հիմնավորելի է , որ Արցախի առանձնացումը Ադրբեջանից նույնքան իրավական է, որքան և Ադրբեջանի դուրս գալը ԽՍՀՄ-ից: Գիտենք, որ Ադրբեջանը ոչ մի կերպ չի թաքցնում իր հավակնությունները ոչ միայն Արցախի, այլև ՀՀ տարածքի նկատմամբ: Գիտենք, որ Նախիջևանի ԻԻՀ-ը անօրինական կարգով է մնացել Ադրբեջանի կազմում, և որ այնտեղ իրականացվող միլիտարիզացիայի գործընթացը ոչ մի իրավական հիմք չունի: Գիտենք, որ ԼՂԻՄ-ի կազմից դեռևս մի հատված / Շահումյանի շրջանի / մնում է Ադրբեջանական տիրապետության տակ, ինչը երբևէ լրջորեն չի քննարկվել բանակցությունների ընթացքում: Գիտենք, որ Ադրբեջանը ուժով փորձել է ոտնահարել Արցախի ինքնորոշման միջազգայնորեն ընդունելի իրավունքը: Չենք առանձնացնում Ադրբեջանի տարածքում ապրած և ցեղասպանված ու փախստական դարձած բազմահազար հայերի իրավունքների վերականգնման, պատճառված վնասի

հատուցման, իրենց բնակության վայրեր վերադառնալու հնարավորության խնդիրները:Տասնյակ տարիներ մենք հանդուրժում ենք թշնամու կողմից մեր զինվորներին խոցելու պրակտիկան, մեր, անգամ ՀՀ տարածքում, խաղաղ ազգաբնակչության ռմբակոծության փաստերը: Այս թվարկումը կարելի է շարունակել, բայց կարծում ենք սա էլ բավական է հասկանալու համար, որ այսպիսի գործելաոճով մենք երբեք խաղաղության հասնել չենք կարող:

Հավելենք, որ երբ 2016թ. Ադրբեջանը փորձեց սանձազերծել նոր պատերազմ, դրա համար նույն ‘‘միջազգային հանրությունը’’ ոչ մի կերպ չնվազեցրեց նրա հավակնությունների չափը, ոչինչ չփոխելով այսպես ասած ‘‘բանակցային գործընթացի’’ բովանդակային մասում:

Եվ այս իրավիճակի հիմնական պատասխանատուն ու մեղավորը մենք ենք, մեր իշխանությունների անատամ, անհեթեթ, անդեմ, անկամ քաղաքականությունը, որ վարել են նրանք երկար տասնամյակների ընթացքում: Մենք մեր բազմաթիվ իրական հավակնություններից և ոչ մեկով չենք ծանրացրել բանակցային անպտուղ հանդիպումները, գերնպատակ համարելով Ադրբեջանի հավակնություններին ինչ որ ճանապարհներով դիմակայելու պրակտիկան, մեր իսկ անխոհեմությամբ մեզ համար ստեղծած խրթին իրավիճակներից խուսանավելու գործելաոճը:

Դրա հետևանք էր 2016թ. ապրիլյան պատերազմը, որտեղ մենք ունեցանք մարդկային և տարածքային կորուստներ: Անգամ այդ ծանր վիճակի անպատեհությունից մենք կարող էինք օգուտ քաղել, Արցախը հայտարարելով ՀՀ անբաժանելի մաս: Դրա բոլոր հիմքերը կային և կարող էին ստեղծվել, որպես ակնհայտ արտաքին սպառնալիքից Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման միակ տարբերակ: Մենք բաց թողեցինք այդ հնարավորությունը: Շարունակաբար մենք մեր ամուլ կեցվածքով և լալկանությամբ հնարավորություն տվինք Ադրբեջանին վերադառնալ իր նախկին գործելաոճին՝ նորից սկսեցին կրակել մեր դիրքապահների վրա, նորից փորձեցին դիվերսիոն ներթափանցում իրականացնել, կարծես թե ոչինչ չէր եղել և ոչ մի պատասխանատվության խնդիր չկար: Հրադադարի խախտման վերսկսման առաջին իսկ փորձից, եթե հայկական կողմը կոշտ պատասխաներ, ադրբեջանական կողմը երկար ժամանակով կխուսափեր դրա կրկնությունից:

Այսինքն ոչ մի պարագայում մենք պատասխանողի կամ խաղաղություն հայցողի կարգավիճակում չպետք է լինենք, քանի որ դա թշնամու կողմից ընկալվում է որպես իր սանձերը լիովին բաց թողնելու հնարավորության ազդանշան: Այսպես կոչված բանակցային գործընթացի առաջին նախապայմանը, որ պետք է դրվի մեր կողմից, դա պետք է լինի հետևյալը. պատերազմի վերսկսման փորձի դեպքում Արցախը կճանաչվի որպես Հայաստանի հանրապետության անբաժան մաս:

Խաղաղության պարտադրման համար մենք պետք է թույլ չտանք, որ թշնամու կողմից հրահրվող սահմանային միջադեպերը մնան անպատիժ: Մենք պետք է օգտագործենք Ադրբեջանի բազմազգ հանրության մեջ միջէթնիկական կոնֆլիկտների

առկայությունը, ինքնորոշման նպատակ ունեցող ազգերին օժանդակելով իրենց պայքարի ճանապարհին: Մի խոսքով մենք ինքներս պետք է շարունակաբար խնդիրներ ստեղծենք թշնամու համար բոլոր հնարավոր ուղղություններում:

Մեր նպատակն է տնտեսապես զարգացած պետության կառուցումը, որտեղ ժողովրդագրական դինամիկ աճ կա և ազգային, ընտանեկան, հասարակական արժեքները գնահատված են, որտեղ պետական հոգածության տակ են վերցված կրթությունը, գիտությունն ու մշակույթը, առողջապահությունն ու բնակարանաշինությունը: Պետական տնտեսության առկայությունն ու մրցակցային լինելը մեզ թույլ կտան ստեղծված հասարակական արդյունքի բաշման մեխանիզմների բազմազանության և կիրառելիության հաշվին ձևավորել սոցիալապես հնարավորինս արդար հասարակություն: